Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 863-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Միջգերատեսչական խորհրդի նպատակն է ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի պատշաճ իրականացման մշտադիտարկումը և գնահատումը:

2. Միջգերատեսչական խորհուրդը՝

1) մշտադիտարկում է ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման ընթացքը.

2) ուսումնասիրում ու վերլուծում է ռազմավարության և գործողությունների ծրագրի՝ պատասխանատու մարմինների կողմից ներկայացված՝ կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացված՝ ռազմավարության և գործողությունների ծրագրի ու դրա կատարման վերաբերյալ առաջարկությունները.

3) գնահատում է մշտադիտարկման, ինչպես նաև վերլուծության հիման վրա վեր հանված խնդիրներն ու հնարավոր ռիսկերը և պատասխանատու մարմիններին ներկայացնում դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.

4) սահմանված կարգով հաստատում է ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի կատարման կիսամյակային և տարեկան հաշվետվությունները.

5) տարեկան հաշվետվության հաստատման հետ մեկտեղ կարող է առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարություն՝ վերանայելու ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը՝ մշակելով մշտադիտարկման արդյունքների և առաջարկությունների վրա հիմնված համապատասխան փոփոխությունների նախագիծ.

6) կազմակերպում է միջգերատեսչական համագործակցությունը ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում.

7) տարեկան հաշվետվության հաստատման հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 6-ի N 736-Լ որոշման N 1 հավելվածի 111-րդ կետով սահմանված իր գործառույթի իրացման շրջանակներում, կարող է առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն՝ նույն կետով նախատեսված տարեկան զեկույցների բովանդակության վերաբերյալ:

3. Միջգերատեսչական խորհուրդը ռազմավարության և գործողությունների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա գնահատում է ռազմավարության և գործողությունների ծրագրի ազդեցությունը հասարակության վրա: Իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքում կարող է նախաձեռնել ռազմավարության և գործողությունների ծրագրի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ:

2. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Միջգերատեսչական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև՝ արտահերթ նիստերի միջոցով: Նիստերն անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել նաև առցանց (հեռավար) եղանակով, ինչպես նաև գրավոր կերպով՝ հարցման միջոցով՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ

կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ՝ միջգերատեսչական խորհրդի անդամների կողմից փոխադարձաբար ընդունելի տարբերակով:

5. Միջգերատեսչական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է միջգերատեսչական խորհրդի նախագահը:

6. Միջգերատեսչական խորհրդի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է միջգերատեսչական խորհրդի նախագահի տեղակալը:

7. Միջգերատեսչական խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ միջգերատեսչական խորհրդի նախագահի անդրադարձով:

8. Միջգերատեսչական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է միջգերատեսչական խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

9. Միջգերատեսչական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

10. Միջգերատեսչական խորհրդի արտահերթ նիստերը գումարվում, ինչպես նաև միջգերատեսչական խորհրդի նիստն առցանց (հեռավար) եղանակով կամ գրավոր կերպով անցկացվում են միջգերատեսչական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

11. Միջգերատեսչական խորհրդի անդամները հերթական նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին միջգերատեսչական խորհրդի քարտուղարության կողմից տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ, իսկ արտահերթ նիստի մասին՝ ողջամիտ ժամկետում:

12. Միջգերատեսչական խորհրդի անդամի առաջարկությամբ և միջգերատեսչական խորհրդի հրավերով նիստերին կարող են մասնակցել նաև Ազգային ժողովի պատգամավորներ, շահագրգիռ այլ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատ փորձագետներ:

13. Միջգերատեսչական խորհրդի նախագահի հանձնարարությամբ, միջգերատեսչական խորհրդի նախագահի տեղակալի կամ միջգերատեսչական խորհրդի

քարտուղարության նախաձեռնությամբ՝ նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու և նախապես քննարկելու նպատակով կարող է կազմակերպվել նախանիստ՝ միջգերատեսչական խորհրդի նախագահի տեղակալի գլխավորությամբ, որի կողմից սահմանվում է նախանիստի մասնակիցների շրջանակը:

3. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

14. Միջգերատեսչական խորհրդի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը:

15. Քարտուղարության հիմնական նպատակն է՝ ապահովել միջգերատեսչական խորհրդի բնականոն գործունեությունը:

16. Քարտուղարությունը՝

1) մինչև յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա առաջին 10-րդ աշխատանքային օրը, ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմիններից ստանալով յուրաքանչյուր գործողության կատարման առնչությամբ առկա տեղեկատվությունն ամփոփող հաշվետվությունը, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա առաջին 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի կատարման կիսամյակային հաշվետվությունը և ներկայացնում միջգերատեսչական խորհրդի հաստատմանը.

2) մինչև յուրաքանչուր տարվա ավարտին հաջորդող ամսվա առաջին 10-րդ աշխատանքային օրը, ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմիններից ստանալով յուրաքանչուր գործողության կատարման առնչությամբ առկա տեղեկատվությունն ամփոփող հաշվետվությունը, յուրաքանչյուր տարվա ավարտին հաջորդող ամսվա առաջին 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը և ներկայացնում միջգերատեսչական խորհրդի հաստատմանը.

3) միջգերատեսչական խորհրդի կողմից հաստատվելուց հետո մեկշաբաթյա ժամկետում տարեկան և կիսամյակային հաշվետվությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և հրապարակում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում.

4) միջգերատեսչական խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ռազմավարության մեջ և գործողությունների ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծեր.

5) նախապատրաստում է միջգերատեսչական խորհրդի նիստի և նախանիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում միջգերատեսչական խորհրդի անդամներին.

6) կազմում է միջգերատեսչական խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները.

7) վարում է միջգերատեսչական խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

8) ապահովում է միջգերատեսչական խորհրդի որոշումների և նիստերի արձանագրությունների տրամադրումը միջգերատեսչական խորհրդի անդամներին.

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 6-ի N 736-Լ որոշման N 1 հավելվածի 111-րդ կետով նախատեսված գործառույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ